

4054

793

S-56

ԲԱՂԴԱԽԱՂ

ՏԸՐԸՄԻ ԳԵՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ՄԷԿ ՈՒՂԵՐՋԻՆ ՔԱՂՈՒՄԾ

معارف عمومیہ نظارت جبلتہ سنک ۲۸ رجب ۳۱۱ و ۲۳ کانون ثانی
۳۰۹ تاریخلی و ۷۹۷ نومرولی رخصتنامه سیله نشر اولمشدر
مصارف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولنه رق
طبع اولمشدر

2004

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՅՍՃԵԱՆ

1894

793

S-56

2011

793

S-56

ԲԱՂԴԱԽԱՂ

ՏԸՐԸՄԻ ԳԵՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ
ՄԷԿ ՈՒՂԵՐՁԷՆ ՔԱՂՈՒԱԾ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۲۸ رجب ۳۱۱ و ۲۳ کانون ثانی
۳۰۹ تاریخلی و ۷۹۷ نومرولی رخصتنامه سیله نشر اولمشدر
مصارفی آمریقان مسیوزر شرکی طرفندن تسویه اولنه رق
طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՅՍՏՃԵԱՆ

1894

ԲԱՂԴԱԽԱՂ

→→→00←←←

ՏԵՐԸՄԻ ԳԵՐ. ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ՄԷԿ ՈՒՂԵՐՁԷՆ
ՔԱՂՈՒԱՍ

→→→▶▶▶:◀◀◀←←←

Ի՞նչ է բաղդախաղը: Ասոր սահման մը տալու համար իւր ինչ ինչ տարերքներն ի նկատ առնելու ենք: Ինձ կը թուի թէ բաղդախաղ խաղալն է անձնական շահ մը ձեռք բերելու հետամուտ ըլլալ ի վրաս ուրիշին, թէև անոր հաւանութեամբ, և առանց շահուածին պատշաճ փոխարինութիւն մը ընելու, կամ առանց հանրային հարստութեան ամբողջութեան վրայ ու է յաւելում ընելու: Կը տեսնենք թէ այս իմաստով բաղդախաղը շատ կերպերով կրնայ ի գործ դրուիլ. խաղերով, անստոյգ ձեռնարկութիւններու ձեռնամուխ ըլլալով, և արժէթուղթերու առևտուրով զբաղելով: Արդ, կարծեմ իրաւունք ունիմ համարիլ թէ ոչ մի քրիստոնէի վայելուչ է այս կերպերուն ու է միով բաղդ խաղալու: Այսպիսի ենթադրութիւն բոլորովին մէկդի կը թողում: Սակայն ոմանք բաղդախաղի ի նպատակ կը խօսին ըսելով թէ բաղդ կրնանք խաղալ զրօնելու, զուարճանալու համար, և



38607-67

52496-Ա. Կ.

այս հիման վրայ է որ ջատագովուած է և և կը ջատագովուի այն :

Ես լիովին կ'ընդունիմ զբօսանքի և զուարճութեան պէտքը մերինին նման կեանքին շտապին մէջ : Սակայն ճիշդ այս տեղ պէտք է սահման մը քաշենք : Խաղի մը զուարճացունող յատկութիւնը նոյն իսկ խաղին մէջն է, ապշեցուցիչ անակնկալներու մէջ, յուսոյ և վախի յաջորդութեանց մէջ, ճարտարութեան առիթներու մէջ, անստուգութեան տուած զրգուութեան մէջ, և լաւ խաղերու այն բոլոր շահեկան տարերքներուն մէջ որոց քաջ տեղեակ ենք : Ստակի կորուստը խաղին զբօսեցունող յատկութեան հետ ամենեւին կապակցութիւն չունի : Ընդհակառակն, ես կը համարձակիմ ըսել թէ ստակ կորսնցունելու վտանգը զբօսանքի ոչ միայն էական չէ՝ այլ ուղղակի անոր հակառակն է : Եթէ ստակ կորսնցունելու վտանգը չնչին բան է, կրնայ զգալի հետեանք չունենալ, եթէ ստակ կորսնցունելու վտանգը մեծ է, խաղին շահեկանութիւնը բոլորովին կը փոխուի և կ'եղծանի, և խաղին կազդուրիչ յատկութիւնը կը կորսուի . որովհետեւ մարդկային նկարագիրը ոչ ինչ այնչափ կ'ապականէ որչափ ստակի մինչև իսկ փոքր գումարներ շահելու կամ կորսնցունելու անստուգութիւնը : Կրկին և կրկին շուարած եմ ազահութեան մինչև իսկ ամենէն ստորին և չնչին ձևերուն խորամանկութեան և կարողութեան վրայ : Մէկ խօսքով,

խաղի մը տուած զուարճութիւնը չկայանար ստակ կորսնցունելու վտանգին մէջ, այլ մանաւանդ կը վնասուի անկէ :

Սակայն և այնպէս թէև երբեք չեմ կրնար հաւատալ, դիցուք թէ մարդ կրնայ ունակաբար խաղերու մէջ ստակի փոքր գումարներ վտանգի ենթարկել առանց ունէ բարոյական վնաս կրելու . սակայն ցաւալի է որ ընդհանուր փորձառութիւնը կը ցուցնէ, և կը հաւատամ թէ անհերքելի կերպով, թէ խաղերով այսպէս ստակ շահելու ունակութիւնը արագ արագ կը զօրանայ : Կորսուածը վերստին ձեռք բերելու կամ մեծ հարստութիւն դիզելու աւելի զօրաւոր տարօրինակ բաղձանք մը յերևան կ'ելլէ, և բոլոր այն խաղերը որ գերելու միտում ունին՝ վտանգաւոր կ'ըլլան : Երբ ստակ գրաւ դնելով կը խաղանք, չուտով անհանդարտ, տենդօտ, կիրքոտ փափաք մը կը ծնի մեր ներսի դին : Խաղին վրայ խորհուրդներ կու գան մեզ անդէպ ժամանակներ և միտքը կը զբաղեցունեն մեր կամաց հակառակ : Այս մասին խնդրոյն վրայ խօսելու ամենէն յարմար անձանց փորձառութիւնը կը վկայէ թէ բաղդախաղերու հետեանքը մինչև իսկ գինեմոլութեան հետեւանքներէն շատ աւելի աղետալի են : Կրնա՞ք կարծել թէ այն անձը որ գրեթէ մինչև առաւօտ կը նստի ստակի համար խաղալու, երկար ժամեր մեծ ճիգեր թափելով, կրնայ կազդուրում առած դառնալ իւր կենաց վա-

յերուչ գործին: Այս հարցումն ընեն իսկ գրեթէ ծաղրածութիւն է:

Սակայն աւելի յառաջ նայինք: Ոչ որ իրաւունք ունի միայն իւր անձը խորհելու: Պարտի ի նկատ առնուլ նաև իւր ազդեցութիւնն այլոց վրայ: Պարտի ի հաշիւ առնուլ իւր վարուց ազդեցութիւնը ընկերութեան վրայ և ճանչնալ իւր պարտականութիւններն առ ընկերս: Լոկ անձնական վայելքը չենք կրնար նկատել մարդկային գործոց ճշմարիտ նպատակակէտ. ոչ ալ գոհ կրնանք ըլլալ միայն մեր անձնական բարոյական զարգացումը ձեռք բերելով: Կը հարցնենք թէ մեր զուարճութիւնը ուրիշներուն ո՛րչափի կը նստի: Գրաւը զոր վտանգի կ'ենթարկենք՝ թերեւս մեր հասցիներուն գումարին համար շատ քիչ տարբերութիւն ընէ, բայց ի՞նչ է այն անոնց համար որ մեզ հետ խաղալ կը փորձուին: Մենք կրնանք այնչափ անձնիշխանութիւն ձեռք բերած ըլլալ որ այդ գրգռուումէն չվնասուինք, և կարենանք արգելել զայն երբ և ուղենք: Բայց անո՞նք: Կարելի է ըմբռնել թէ կրնանք գոհացունել մեր խղճմը՝ տանքը, սակայն կրնանք վիրաւորել անոնցը: Պէտք չէ որ մեր ազատութիւնը գործածենք ի վնաս մեր եղբոր:

Եւ ի՞նչ են բազդախաղի ընկերացոյ բաները: Շատ լաւ կը ճանչնանք զանոնք: Անոնք կը կազմեն սոսկալի ցուցակ մը, որ կը պարունակէ նախանձ, ստախօսութիւն, ժա-

մանակի վասնում, խաբէութիւն, կիրք, կործանում: Եւ ի՞նչ օգուտ երբեք ըրած է բազդախաղը: Ի՞նչ օգուտ, կրնանք յուսալ թէ, յառաջ բերելու յարմար է: Ի՞նչ վեհանձն կամ աղնիւ յատկութիւն, հաւանական է թէ, պիտի ծնուցանէ: Կենաց բարձրագոյն պարտականութիւնները գործադրելու ի՞նչ մտատիպար կ'ընծայէ: Կը վրդովէ պատուաւոր, անդրդուելի, համբերատար աշխատութիւնը և մինչև իսկ անոր յարգը կ'իջեցունէ: Կը քաջալերէ անզգուշութիւնը և ունակութիւն մը կ'ընէ զայն: Կարեկցութիւնը կը բթացունէ և կը սպաննէ. մէկ խօսքով, մարդոց միջև օգտակար և քաղցր յարաբերութիւնները կ'անհետացունէ: Տարակուսի տեղի կը մնայ, ուրեմն, երբ հանդարտութեամբ իրողութիւնները դիտենք, թէ բազդախաղն է իսկապէս մեզք մը: Ո՞չ ապաքէն մարդիկ նուազ յարմար կ'ընէ Աստուծոյ ծառայելու, և նուազ կարող՝ ծառայելու իրենց ընկերաբարձոց: Իսկապէս անձնասիրութեան մարմն մնացումն է այն. և անձնասիրութիւնն է մեզաց բուն էութիւնը:

Օրէնսդիրներ ամէն ժամանակաց մէջ շանացած են այս չարիքը արմատախիլ ընել: Սակայն օրէնքը առանձինն չկրնար ընել զայդ: Բազդախաղը լոկ արտաքին գործողութիւն մը չէ, այլ այդ արտաքին գործողութեան միջոցաւ կ'ըլլայ ներքին հոգեկան զօրութիւն մը: Ամենէն խիստ օրէնսդրութիւնը ապարդիւն

եղած է: Եկեղեցական ժողովներն ապարդիւն եղած են: Ամենէն հին քրիստոնէական գրութեանց միոյն նիւթն այս էր. «Եթէ ըսես թէ քրիստոնեայ ես մինչ նարտ խաղացող ես, սուտ կը խօսիս, վասն զի աշխարհի բաժանորդ ես:» Սակայն մինչ քրիստոնեայ առաջնորդք այդ կանուխ ժամանակաց մէջ բաղդախաղի դէմ բաց է ըլլաց կը ճառէին, սակայն տակաւին քրիստոնեայք սոյն փորձութեան տեղի կու տային: Անոնց շիրիմներուն մէջ բաղդախաղի գործիքներ կը գտնուին: Օրէնսագրութիւնը, նորէն կ'ըսեմ, չկրնար կասեցունել այն չարիքը որ մեր վրայ պիտի գայ. սակայն օրէնսագրութիւնը կրնայ փորձութիւնը նուազեցունել: Կրնայ հանրային կարծիքը հաստատել և ոյժ տալ անոր: Սակայն և այնպէս ցարդ այս մեծ խնդրոյն վրայ հանրային կարծիքը անորոշ է,

ինչո՞ւ այս անստուգութիւնը: Դժբախտաբար, շատերու կեանքը չունի նպատակ: Կեանքին միակերպութիւնը փոխող բանի մը կը կարօտին անոնք: Կը թուի թէ բազդի խաղերու յառաջ բերած գրգռումը, ստակի սիրով աւելի զօրացած, իրենց ձեռացը մէջ ամենէն պատրաստ գրգռումն է: Ոչ ալ այսպէս աննպատակ և միօրինակ կեանքը միայն մէկ դասակարգի յատուկ է: Ամենուն ալ հասարակ է այն: Հարատւութեան և պարագոյ ժամանակի տէր անձինք չունին մեծ զբաղմանց ոգևորիչ մղումը: Իսկ արհեստաւորաց և գոր-

ծաւորաց շատերը չունին առողջ զբօսանքներու կազմուրումը: Երկու կողմն ալ մտաւորական և հոգևոր ջանից ցաւալի պակասութիւն մը կայ: Քիչ կ'ըմբռնուի թէ մինչև իսկ ամենէն աղքատ և ստորին մարդուն կեանքը ի՞նչ պատեհութիւններ և բարձրութիւն ունի:

Ուրեմն մենք, իբրև քրիստոնեայ, մեր մէջ և մեր շուրջ գտնուող աշխարհին վրայ նոր և ազնուագոյն շահագրգռութիւններ յարուցանելու ջանանք: Մեր պատեհութեանց և կարողութեան չափին համեմատ պարտիմք ճշնիլ մեծ և վեհանձն եռանդ արծարծել մեր շուրջ: Անձնական կորուստի խորհուրդը, և նոյն իսկ կորուստը չբուժեր բազդ խաղալու կիրքը: Սատանան սատանայ չկրնար հանել: Անձնասիրութեան ոգին անձնասիրութիւն չկրնար հանել: Միայն քրիստոսի ոգին, Աւետարանի ոգին, անձնուրացութեան ոգին, Խաչին ոգին կրնայ զայն հանել: Այս աղբիւրէն է որ պէտք է ակնկալենք օգնութիւն, և անսարակոյս ամէն ժամանակ մեծապէս կարօտ ենք օգնութեան: Անոնք որ այս խնդրոյն վրայ մեծագոյն հեղինակութիւն ունին, կ'ըսեն թէ բաղդախաղի չարիքը արագ աճելու վրայ է, թէ՛ ծաւալով և թէ՛ սաստկութեամբ: Սակայն պէտք չէ որ այս վհատեցունէ զմեզ: Ամէն երկիր դարուս յատուկ պարագաներէն յառաջ եկած չարիք է սա. և դարս որ փորձութիւնը կու տայ, կու տայ նաև անոր դարմանը: Ասոր դարմանըներու համար պարտիմք արծարծել մարդկա-


յին եղբայրակցութեան ճշմարիտ ոգին, որ իւր հետ կը բերէ գործնական և ազդու ծառայութեան բազմաթիւ առիթներ: Կարօտեալներուն օգնելու համար միացեալ ջանքերու հրաւերը ամէն տեղ կը լսուի, և ամէն ոք որ գիտէ Աւետարանին ոգին, պէտք է մղուի ճգնելու իւր շուրջը տարածել անոր ներշնչող զօրութիւնը:

Այս մեծ ձեռնարկին վրայ թողէք որ վսեմ ազդարարութեան խօսք մը ըսեմ: Մեր գերը չենք կատարեր երբ ուրիշները կը քննադատենք: Եթէ մեր հոգեկան գործը լաւ կատարել կ'ուզենք, պէտք է որ կատարենք զայն մեր անձնական տկարութիւնը ճանչնալով ամենայն խոնարհութեամբ, որ ազդեցիկ ծառայութեան միակ աղբիւրն է: Դարմանը զոր ունինք, դարմանը զոր պարտիմք ջանալ ի կիր առնուլ, հոգևոր և կրօնական է: Ըսուած է թէ այս չարիքը պիտի մնայ ցորչափ մարդկային բնութիւնը նոյնը կը մնայ: Վայրկեան մը խնդրոյ առարկայ չեմ ըներ զայս, սակայն բաց է բաց կը մերժեմ անկէ հետևեցուած եզրակացութիւնը թէ աշխարհի մէջ չարիքը անյաղթելի է: Աւետարանին պատգամը Սուրբ Հոգիով վերստին ծննդեան մը պատգամն է, և այդ պատգամին ճշմարիտ ըլլալը ամէն օր կը հաստատուի մեր շուրջ պատահող դէպքերով: Աստուծոյ վրայ աւելի կատարեալ վստահութեան կը կարօտինք որպէս զի աւելի կատարեալ բարոյական յաջողութիւն ունենանք: Դժուարութիւնները չեմ

քողարկեր: Կը տեսնեմ, որպէս ու է ուրիշ մէկը, կործանմանց հարկու տեսարանները որոց բոլորս ալ ծանօթ ենք: Սակայն իբրև քրիստոնեայ հովիւ, ի՞նչպէս կրնամ յուսահատիլ Աստուծոյ խոստումներուն կատարման մասին:

Ուրեմն ի՞նչ պարտիմք ընել: Մեր բոլոր խաղերուն և զուարճութիւններուն մէջ պարտիմք զգուշանալ ստակի ամենափոքր գումար մը վտանգելէ: Պարտիմք, մեր բոլոր կարողութեամբ, ջանալ մեր ընկերները ետ կեցունել ամէն գործառնութենէ որ շահը դիպուածին հետ կը կապէ: Մեր պատեհութեանց և ազդեցութեան համեմատ, որչափ կարողութիւն որ ունինք, պարտիմք գործածել բոլոր օրինաւոր զուարճութիւնները գրաւ դնելու նուաստութենէն զերծ պահելու: Թող ամէն ոք ջանայ իւր համոզումը և իւր համոզման պատճառները պարզել անոնց որոց հետ բնականաբար առնչութիւն ունի: Լուին որոշման զօրութիւն մը կայ որ միշտ ինքզինք կը յայտնէ: Զանքը կը պահանջէ զօհողութիւն մը: Կրնա՞յ ուրիշ կերպ ըլլալ: Մարդիկ դիւրաւ պիտի չկրնանք ետ կեցունել բազդախաղէն: Դիւին իշխանութիւնը և աշխարհիս իշխանութիւնը մեր դէմն են այս մասին: Բայց մեր Տէրը, որում կը նայինք, աւելի զօրաւոր է, և վերջապէս պիտի յաջողինք: Սակայն և այնպէս, յաղթութիւնը պիտի չշահինք բորբոքիչ խօսքերով կամ կատաղի ազդարարութիւններով, այլ բազդի կիրառութիւնը մերժելու

խնդրոյն մէջ հանդարտութեամբ ընելով անձ-
 նուրացութեան գործեր որ սէրէ բխին, և սէր
 ունենան իրենց նպատակ, այն սէրը որ բոլոր
 անիրաւ արարքները խստիւ դատապարտելով
 հանդերձ, կ'ընդունի թէ կենդանի մարդուն
 ներսի դին կայ բան մը որոյ մէջէն Աստուծոյ
 ողորմութիւնը կրնայ անոր սրտին հասնիլ,
 բան մը զոր Աստուծոյ շնորհքը արդիւնաւոր
 կերպիւ կրնայ գործածել իբրև միջոց իւր
 փառքը յայտնելու :



4054

0013133

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0013133

